ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2023 թվականի № -Ա
ք. Երևան

ՄԻ ՇԱՐՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն և 2022 թվականի նոյեմբերի 23-ի №494-Ն որոշումները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այսոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 21.177 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.
2) «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Դուստր Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 21.177 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.
3) «ԱՐՄ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արմ Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 21.177 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սուն Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 21.177 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 25-ի՝

1) «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Այսոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №512-Ա որոշումը.

2) «ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Դուստր Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №513-Ա որոշումը.

3) «ԱՐՄ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արմ Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №514-Ա որոշումը.

4) «ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սուն Սոլար» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №515-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 27-ից և գործում է մինչև 2023 թվականի նոյեմբերի 27-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
ապրիլի 2023թ.